

ԻՒՂԱՐԵՐ ԿԱՆԱՅՔԸ.

Յիսուս միաշարածու առաւօտուն յորութիւն առած, առաջ Մարիամ Մաղղա-
ղնացուն երեւեցաւ, որ նորանից եօթը դեւ էր հանել: Նա զնաց նոցա պատմեց,
որոնք նորա հետն էին, երբ որ սուղ էին անում եւ լաց էին լինում: Իսկ նորա
երբ որ լսեցին թէ կենդանի է, եւ թէ իւրեան երեւեցաւ, չհաւատացին: (Մարկ-
ձԶ: 9—11):

Քրիստոսի խաչը ամենից յետոյ ձգողները կանայքն էին, և շարաթը
անցնելուց յետոյ Քրիստոսի մօտ ամենից առաջ զնացողները կանայք էին.
և սա զարմանալի բան չէ, որովհետեւ սուրբ Գրքի մէջ յիշված չէ թէ մի
կին Քրիստոսին թշնամութիւն ցոյց տուած լինի: Գրված չէ թէ մի կին
Նորան հալածած, կամ հայհոյած և անիծած լինի: Նորա աչքերը կապո-
ղը Նորան ապտակով կամ բռունցով զարկողը, Նորա սուրբ երեսին
թքողը կին չէր: Նորան քարկործողը կամ գլխին փշերից պսակ զնողը
կին չէր:

Սակայն Քրիստոսի ոտների մօտ նստած, Նորա խօսքերին ականջ զնողը
կին էր: Նորա գլխին խիստ պատուական իւղ թափելով, Նորան շատ պա-
տիւ և սէր յայտնողն ևս կին էր: Նորա սուրբ ոտները իւր արտասուքով
թրջելով մազերով սրբողը կին էր: Քրիստոսի հետ Գալիլիայից եկող և
իւրեանց ստացուածքով ծառայութիւն անողն և Նորա նեղութիւններին և
վիշտերին մասնակից եղողները կանայք էին: Պիղատոս կուսակալի առաջև
կապված սուրբ Յիսուսի համար միջնորդութիւն անող և Պիղատոսին բա-
րեխօսութիւն անելով Նորան խրատողը կին էր, և այն ևս մի կռապաշտ
կին: Քրիստոսի իւր խաչը Գողգոթայ ասված տեղը տարած ժամանակը,
երբ քիչ էր մնում որ շունչը կտրվէր, Նորա համար լաց լինողները և կոծ
անողները Երուսաղէմի աղջիկներն էին: Եւ մեր Տէր Քրիստոսը խաչի վե-
րայ Աստուծուց և իւր սուրբ ժողովրդից մերժված երևեցած ժամանակը,
Նորա Նաչին մօտեցողը, այնտեղ կանգնելու համարձակողը և ինքն իւ-
րեան Նորա հետ մէկ ցոյց տուողը կին էր:

Աւրեմն զարմանալի բան չէ որ երրորդ օրը արշալոյսին Քրիստոսի գերեզ-
մանը առաջին զնացողները այս սուրբ կանայքն էին: Նոքա շարաթ օրը
պատուիրանի համեմատ հանգստացան, բայց երբ շարաթը անցաւ, արշա-
լոյսին ելան որ խաչված Յիսուսին պտռեն: Ազգակի Նորա գերեզմանը
վազեցին: Բայց իւրեանց հասնելուց առաջ Աստուծու հրեշտակը հասած
էր, և գերեզմանի պահապան զօրքերը մեռելի պէս էին եղած. այն մեծ
քարը գերեզմանի դռնից մի կողմ ձգված էր և մեռած Յիսուսը մահը
խափանելով և ինքը մահի և զժողքի բանալիները բռնելով յաւիտեանս
յաւիտենից ապրումէ:

Աւրեմն Քրիստոսի պատուականութիւնը առաջին իմացողները այս սուրբ
կանայքն էին: Հրեշտակը նոցա այս բարի աւետիսը տուաւ թէ Յիսուս

այստեղ չէ՛, յարութիւն առած է՛: Եւ ինքն Յիսուս յարութիւն առնելուց յետոյ Նորան առաջին տեսնողները նորա էին: Նորան ամենից առաջ տեսնող՝ Նորա երեսին նայող և Նորա ոտները առաջին ընկնողները նորա էին: Նորա առաջին օրհնված ողջոյնները նորա ընդունեցին:

Եւ ետարանում՝ այսպէս է գրված թէ « Յիսուս վաղուցէն առաջ յարութիւն առած ուրիշ Մարիամ Մարգարէնացուն երկեցաւ »:

Պողոս առաքեալն Քրիստոսի յարութեան վերայ Աորնթացիներին գրած ժամանակ այսպէս է ասում. « Եւ ամենից յետոյ ինձ ևս երեւեցաւ »: Սակայն այս Մարիամը այսպէս կարող էր ասել, « և ամենից առաջ ինձ երեւեցաւ: Իւր առաջին խօսքը ինձ խօսեցաւ: առաջին կանչած անունը իմ անարժան անունս էր. Նորա առաջին սրբած արտասուքը և առաջին ուրախացրած սիրտը իմս էր: Աշխարհի մեղքը վերառնելուց յետոյ Նորա առաջին մխիթարած մեղաւորը ես ինքս խեղճ ողորմելի Մարիամ Մաղղաղենացիս էի »:

Սակայն բացի Մարիամից ուրիշ կանայք ևս կային, որ կանուխ գնացին գերեզման և այնտեղ Աստուծու հրեշտակին տեսան, և Նորա բերանից լսեցին թէ Յիսուս մեռելներից յարութիւն առած է: Սաղոմէն, Յովհաննան և Յակոբոսի մայրը Մարիամ և նոցա հետ ուրիշ կանայք նոյն առաւօտեան մի հրեշտակ տեսան, և նաև Տիրոջ պատահեցան: Հրեշտակը ասաց նոցա. « Յիսուսը այստեղ չէ՛, որովհետև յարութիւն առաւ: ինչպէս որ ասաց. եկէ՛ք տեսէք այն տեղը, ուր Տէրը պառկած էր: Եւ շուտով գնացէ՛ք Նորա աշակերտներին ասացէ՛ք, թէ Նա մեռելներից յարութիւն առաւ: Եւ նորա շուտով գերեզմանից ելան և վազումէին աշակերտներին պատմելու: Եւ քանի որ նորա ճանապարհին էին, իւրեանց աչքով կենդանի Տէրին տեսան: Յիսուս ինքը, նոցա պառած սիրելի Յիսուսը, նոցա սրտին միակ փախազը—Յիսուս նոցա պատահեցաւ, և Նորա քաղցրիկ սուրբութեան համեմատ « ողջոյն ձեզ » ասաց: Նորա Նորա ոտները ընկան և իւրեան երկրպագութիւն արին: Հաւանական է չէ թէ խօսքով, այլ շատ արտասուքով և դառնապէս լալով երկրպագութիւն արին Նորան: Յիսուս ասաց նոցա. « Մի՛ վախենաք, գնացէ՛ք իմ եղբայրներիս ասացէ՛ք »:

Երդ այս կանայքը Առաքեալների առաքեալ եղան: Այս կանայքը Յիսուսի յարութիւնը իմացրին Առաքեալներին, որոնք բոլոր աշխարհին պիտի իմացնէին: Այս աւետիսը այն մարդիկներին տուին, որոնք բոլոր աշխարհին պիտի իմացնէին: Այս աւետիսը այն մարդիկներին տուին, որոնք բոլոր աշխարհի մէջ տարածելու համար որոշված էին: Այս աւետիսը առաջին տարածողը հրեշտակն էր, և հրեշտակից յետոյ կանայքն էին: Քրիստոս մեռելներից յարութիւն առած է. մենք գիտենք որ յարութիւն առած է, նորա երեսը մեր աչքերով տեսանք, Նորա խօսքերը մեր ականջներով լսեցինք, մեր ձեռներով շօշափեցինք Նորան, և մեր սրտերը շատ մխիթարութիւն գտան Նորանից:

Բայց առաքեալները ո՞ւր էին, ի՞նչ վիճակի մէջ էին, ի՞նչ էին անում: Աարդումէնք թէ Մարիամ « գնաց նոցա պատմեց, որոնք Նորա հետն

էին, երբ որ սուգ էին անում՝ և լաց էին լինում՝, Իսկ նոքա երբ որ լսեցին թէ կենդանի է և թէ իւրեան երևեցաւ, չհաւատացին» :

Այստեղ Առաքեալների վերայով երկու բան ենք սովորում, այսինքն նոքա չհաւատացին, և սուգ անելով լաց էին լինում :

1. — Նոքա չհաւատացին, Աստուծու ընտրած ճանապարհը նոցա մտքին համաձայն չլինելով չհաւատացին, Քրիստոս իւր մեռնելը և երրորդ օրը յարութիւն առնելը նոցա կրկին և կրկին խօսած էր, բայց այս լուրը նոցա առաջման գաղափարներին և փարիսեցիների սովորեցրածներին բոլորովին դէմ էր, և չհաւատացին, Մարիամի նկարագրութիւնը շատ յայտնի, բայց և ընդունելի պէտքէ եղած լինէր, երկու հրեշտակ տեսաւ, Տէրին ևս տեսաւ, Տէրը նորան իւր անունով կանչեց, իւր հետ խօսեց, և նորա ձեռով իւր եղբայրներին յատուկ պատուէրներ և կտակներ ուղարկեց, բայց « չհաւատացին » :

Միւս կանանց վկայութիւններն ևս պէտքէ ուղիղ երևած լինէին, Նոքա ևս մի հրեշտակ տեսան, այս հրեշտակը իմացրեց նոցա թէ Յիսուս յարութիւն առած է, հրամայեց նոցա որ գերեզմանը նայեն, և Քրիստոսի մարմնի այնտեղ չլինելը տեսնեն, և յետոյ հրամայեց նոցա, որ փութով աշակերտներին և մանաւանդ Պետրոսին երթան այս օրհնված աւետարտ տանն : Նոքա քանի որ ճանապարհին էին, Յիսուսին տեսան, իւրեանց աչքերով Նորան նայեցին, ահանջներով Նորա ձայնը լսեցին, ձեռով Նորան շօշափեցին, Նորա ոտները ընկնելով կրկնապատութիւն արին, և Նա նոցա վախերը փարատեց, նոցա թուլացած սրտերը զօրացրեց, և իւր եղբայրներին սիրոյ խօսքեր ուղարկեց, Սակայն « չհաւատացին » : Արդու մենք թէ այս լուրն նոցա մի ոչինչ բան երևեցաւ, պատուների առասպելների պէս երևեցաւ :

Եւ այսպէսով բոլոր այն օրհնված օրը խաւարի մէջ անցաւ, և երեկոյ լինելով երկու բարեկամ՝ փութով դալիս են, Լամիսուս ասված եօթը կամ ութը մղոն հեռու մի գիւղից վազու մեն որ Առաքեալներին լուր տան թէ իւրեանք ևս Տէրին տեսած են, Յիսուս նոցա հետ քանի մի մղոն գնացած է, նոցա Մովսէսից սկսելով Քրիստոսի վերայ եղած բոլոր մարգարէութիւնները սովորեցրած է, նոցա տունը մտնելով նոցա հետ սեղան նստած է, և իւր սովորութեանը պէս հացը առնելով օրհնեց, և կտրելով տուաւ նոցա, Նոքա նորան ճանաչեցին, բնաւ կասկած չմնաց, Նոքա իւրեանց կենդանի Տէրն լինելը իմացան, Բայց կարգու մենք թէ առաքեալները « նոցա ևս չհաւատացին » :

Եւ ինչի՞ պատճառը ի՞նչ էր, Արեկի է սրտներում ասումէին թէ արդէն տանուչորս տանուհինդ ժամ անցած է, և մենք Նորան տեսած չենք, եթէ կենդանի է, ինչի՞ մեղ չէ երևում, մենք Նորա ընտրած առաքեալները չենք, ուրեմն հարկաւ ամենից առաջ Ինքն իւրեան մեղ յայտնելու է, Այսինքն եթէ Մեսիան մեռելներից յարութիւն առնէ, նոցա կարգապարտութեանը համեմատ յարութիւն առնելու է, նոցա գաղափարներին համեմատ

կենդանանալու է. եթէ ոչ — մէկ ապացոյց չենք ընդունի. Սա քնն յիմարութիւն է:

Կարգումենք թէ Տէրն մեր վերջը տասնումէկին երևեցաւ, երբոր սեղան նստած էին, և երեսներին զարկեց իւրեանց անհաւատութիւնը և սրտների կարծրութիւնը. որովհետև որոնց ինքը երևեցաւ մեռելներից յարութիւն առած, իւրեանք չհաւատացին »: Եւ յիրաւի յանդիմանութեան և ամաչելու արժանի էին, և Տէրն մեր նոցա յանդիմանեց, Նոցա անհաւատութիւնը անմեղ չէր. և մեր անհաւատութիւնը անմեղ չէ, մեղք է. ամեն ապացուցած բանի համար անհաւատութիւն անելը միշտ մեղք է:

Սակայն 2 — առաքեալները սուգ անելով լաց էին լինում:

Նոքա աշխարհի պէս անհոգ և անհաւատ չէին: Քրիստոսին չկամեցող կեղծաւորների և փարիսեցիների պէս չէին: Աշխարհը Քրիստոսի յարութիւն առնելը չէր կամենում. բայց առաքեալները այնչափ շատ էին կամենում, որ քիչ ապացոյց բաւական չէր: Եւ կարգումենք թէ վերջապէս Յիսուսի նոցա երևելուն, նոքա « իւրեանց ուրախութենից չէին հաւատում »: (Ղուկ. ԻԿ. 41): Այսինքն մի այսպէս բարի աւետիսին ի՞նչպէս կհաւատացիլի Բայց այս կերպ անհաւատութիւն, որչափ որ մթութիւն և վիշտ ևս բերելու լինի, վերջապէս մեղ յաւիտենականութեան կտանի:

Եղբայրներս, երևումէ թէ ամենամեծն Աստուած թող տուաւ որ Առաքեալները կասկածի մէջ ընկնին, որպէս զի մենք կասկածի մէջ չընկնենք: Նոքա դժուարութեամբ հաւատացին, որ մենք զիւրութեամբ հաւատանք: Նոքա մթութեան մէջ ձգվեցան, որ մենք լոյս ունենանք: Արեմն մենք այս բանի մէջ կասկած չանենք. այժմ՝ բնաւ հարկ չկայ կասկածելու. այժմ կասկածելը մեծ մեղք է մեր տեղը և մեզ համար Առաքեալները կասկած արին: Եւ իւրեանց կասկածի պատճառով շատ քննեցին և փորձեցին, որպէս զի մեր հաւատը վէժի վերայ հաստատված լինելը հասկանանք: Այժմ ամեն քրիստոնեայ կարող է ասել թէ Քրիստոս մեռելներից յարութիւն առած է, և այս ճշմարտութիւնը ընդունելը չիմ ամաչում. եթէ նորան չընդունիմ, շատ կամաչեմ:

Երանի նորան չտեսնելով հաւատացողներին: Այս երանութիւնը ձերն ևս լինի, իմն ևս լինի. Յարուցեալ Յիսուսին հաւատացէք, և վերջին օրը դուք ևս յարութիւն պիտի առնէք: Յարութիւն և կեանք եղող Յիսուսին հաւատացէք, և յաւիտենական կեանքը ձերը պիտի լինի:

« Յիսուս Առաքեալն — — — — — յարութիւն առնէ. — — — — — Մարտի 17-ին Մարտի 17-ին — — — — — երևեց — — — — — Երանի՛ Մարիամին: Երանի՛ այն կանանց, որ Քրիստոսին կանուխ պատելով աշակերտներին այն օրհնված աւետիսը բերին: Եւ երանի բոլոր կանանց, որոնց Տէրն մեր Քրիստոս ինքն իւրեան շուտ յայտնվումէ, և որոնք միշտ պատրաստ են նորա համար կատարեալ և պատուական վկայութիւն տալու: Այս երանութիւնը ձերը լինի, մայրերս և քոյրերս, այս երանութիւնը ձերը լինի, այժմ և միշտ և յաւիտեան: